



ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԱԼԻՍԱ ԳԵՎՈՐԳՅԱՆ

ՀՊՏՀ բնօգտագործման
տնտեսագիտության ամբիոնի դղցենու,
տնտեսագիտության թեկնածու

ՈՒՍԿԻ ՎԵՐԼՈՒՇՈՒԹՅՈՒՆԸ ԷԿՈԼՈԳԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Ելնելով էկոլոգիական անվտանգության կառավարման օպտիմալացման խնդրի լուծման անհրաժեշտությունից՝ հողվածում հիմնավորվել է ռիսկի վերլուծության կարևորությունը շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և էկոլոգիական փորձաքննության միասնական համակարգում։ Գնահատման գործընթացը կողմնորոշված է վտանգի, ռիսկի աղբյուրների և գործոնների, ինչպես նաև դրանց հնարավոր ազդեցության գոտիների և ծների հայտնաբերմանը։ Փորձ է արվել գնահատելու հասարակության սահմանափակ նյութական ռեսուրսների պայմաններում տարբեր տեսակի ռիսկերի նվազեցման ծախսների օպտիմալ բաշխման գործընթացը, որը, տվյալ հասարակության տնտեսական և սոցիալական պայմաններին համապատասխան, ապահովում է բնակչության և շրջակա միջավայրի անվտանգության համապատասխան մակարդակի հաղթահարումը։

Հիմնաբառեր. ռիսկի վերլուծության մեթոդաբանություն, էկոլոգիական փորձաքննություն, էկոլոգիական ռիսկի կառավարման սկզբունքներ, սոցիալական վճար, տնտեսական վճար, էկոլոգիական վճար

JEL: Q5, Q57, Q58

Ուսկի վերլուծությունն ուրույն տեղ է գրադեցնում շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման (ՀՍԱԳ) և էկոլոգիական փորձաքննության միասնական համակարգում։ Այստեղից է բխում դրա գիտակիրառական նշա-

նակությունը և օգտագործման անհրաժեշտությունն անտրոպոգեն և բնածին վտանգների կանխման, բացասական հետևանքների գնահատման, ինչպես նաև պաշտպանական գործողությունների արդյունավետության բարձրացման նպատակներով։ Առավել նշանակալի է ռիսկի տեսության հիմնադրույթների և գնահատման մեթոդական մոտեցումների կիրառումն էկոլոգիական անվտանգության ապահովման ոլորտում։ Դրանով, ըստ Էության, հիմք դրվեց ռիսկի կառավարման համակարգերի ներդրմանը և զարգացմանը՝ հատկապես տեխնածին բնույթի արտակարգ իրավիճակների վերլուծության և գնահատման համար։

Ուշագրավ են այն գիտական հետազոտությունները, որոնք որոշակիորեն հստակեցրին ռիսկերի դասակարգման մեթոդական մոտեցումները։ Այդ գործընթացը շարունակական բնույթի է։ Ոիսկի դասակարգումը հասուն անդրադարձ ունեցավ «ազդեցություն» հասկացության մակարդակների, մասշտաբների և մարդկանց ընկալման վրա, ինչն էլ, իր հերթին, նպաստեց վնասների կառուցվածքի, տեսակների և բաղադրիչների գիտական հիմնավորմանը և չափանիշների մշակմանը։ Առանց դրա՝ ռիսկի որոշումը և գնահատումը չէին ունենա որևէ գիտական արժեք։ Բացի դրանից, ռեցիպիտների վրա ազդեցությունների գնահատման տեսանկյունից կարևոր դերակատարությունը վերագրվեց սոցիալական, տնտեսական և էկոլոգիական վնասի որոշման մեթոդների մշակմանը և ստանդարտացմանը։

Զարգացման նոր պայմանները և իրադարձություններն ավելորդ անգամ հաստատում են, որ բացարձակ անվտանգության հայեցակարգը չի կարող ունենալ «բացարձակ գիտական հիմնավորում», քանի որ շրջակա միջավայրում մշտապես առկա է իրական ռիսկի որոշակի աստիճան, որը երբեք հավասար չէ գրոյի։ Դա նշանակում է, որ, տնտեսական գործունեության վտանգի գործոններով պայմանավորված, ռիսկի մակարդակը ևս հակասական բնույթ ունի (ընդունելի ռիսկի մակարդակը՝ ALARA AS LOW AS REASONABLE ACHIEVABLE)¹։

Հայեցակարգային մոտեցմամբ առանձնացված է երկու տարր՝ ռիսկի գնահատում և ռիսկի կառավարում։ Ոիսկի գնահատումը որոշակի իրավիճակում ռիսկի մասշտաբների գիտական վերլուծությունն է, իսկ ռիսկի կառավարումը դրա՝ նվազագույնի հասցեներուն ուղղված որոշումների մշակումը։ Ոիսկի գնահատումն ընդգրկում է հետևյալ գործողությունների ամբողջությունը։ Ինարավոր վտանգի հայտնաբերում – թունավոր նյութի ազդեցության չափի նկատմամբ ռեակցիայի քանակական գնահատում – թունավոր նյութի՝ մարդու վրա իրական ազդեցության գնահատում – ռիսկի բնութագրում (վնասի պատճառման կամ հիվանդության առաջացման հավանականության վերաբերյալ եզրակացություն)։ Վերջին գործողությունը, ըստ Էության, ռիսկի կառավարման գործընթացի առաջին օղակն է, իսկ գործողությունների հիմնական նպատակը՝ բացասական ազդեցությունների ամբողջական համալիրում մարդու առողջությանը սպառնացող առավել նշանակալիների (գերակայողների) որոշումը։

Լայն իմաստով, նման գործողությունների համադրումը, մեթոդական և տեղեկատվական ապահովումը կնշանակի էկոլոգիական անվտանգության կառավարման գիտական հիմքերի ամրապնդում, ինչպես նաև էկոլոգիական

¹ Ст. Кузьмин И.И., Безопасность и техногенный риск. Системно-динамический подход, ж. ВХО им. Д.Менделеева, 1990, т. 35, № 415.

ռիսկի, վտանգի և վնասների որոշման նկարագրական բնույթից անցում քանակական գնահատման ժամանակակից չափանիշների մշակմանը և ներդրմանը:

Անկախ դասակարգման սկզբունքներից և սահմանումներից, ռիսկի՝ որպես գիտական հասկացության ավելի ստույգ մեկնաբանումը հիմնված է հավանական և հնարավոր կորուստների (վնասների տեսքով դրա սահմանման) որոշման վրա: Այլ խոսքով՝ լայն առումով ռիսկ ասելով կարելի է հասկանալ վտանգի չափը, իսկ ներ հմաստով՝ անցանկալի երևոյթների, (իրադարձությունների հավանականությունների հավաքածու և դրանց հետևանքների (դիսկրետ դեպքում) կամ անցանկալի իրադարձությունների հետևանքների չափերի բաշխման ֆունկցիա (չընդհարվող դեպքերում):

Նախագծերի էկոլոգիական փորձաքննության և որոշումների ընդունման տեսանկյունից ավելի հաճախ անդրադառնում են ռիսկի երկու տեսակների՝ տեխնածին և սոցիալական, որոնք, ի տարբերություն բնական ռիսկերի, ավելի կանխատեսելի և կառավարելի են: Բնական ռիսկերի դեպքում կառավարման գործընթացը հիմնականում կազմակերպական բնույթի և ուղղված է անբարենպաստ հետևանքների վերացմանը: Այստեղ է, որ խոսքը պատճառված վնասների, հետևանքների մասին է: Վնասների բնույթը իր հերթին հնարավորություն է տալիս առանձնացնելու էկոլոգիական, սոցիալական և տնտեսական ռիսկերը, իսկ վնասների մեծությունը, կախված ռիսկի ընկալման աստիճանից, առանձնացնում է ռիսկերի ընդունելի (թույլատրելի) և սահմանային (կրիստիկական) և աղետալի տեսակները:

Ընդունելի ռիսկը, ըստ Էության, ռիսկի մակարդակ է, որն արդարացված է տնտեսական, սոցիալական և էկոլոգիական տեսանկյուններից: Պատկերավոր ասած՝ դա այն «գինն» է, որը պատրաստ է վճարել հասարակությունը՝ օգտագործելով շրջակա միջավայրի ռեսուրսները և բնական բարիքները: Բացի դրանից, ընդունելի ռիսկը տարբերակում է վտանգի թույլատրելի և անթույլատրելի տեսակները: Դրանով ընդունելի ռիսկի առավելագույն մակարդակը որոշում է վտանգի սահմանային այն մակարդակը, որը կարող է լինել թույլատրելի:

Ընդունելի ռիսկի հիման վրա հնարավոր է նաև էկոլոգիական անվտանգության մակարդակի չափումը: Այսպիսով՝ ռիսկը, դրա գնահատումը և կառավարումը ընդգրկում են այնպիսի գործոնների պարտադիր հաշվառում, որը տնտեսական և գործունեության այլ տեսակի նախագծերի ՇՄԱԳ-ի գործընթացում կարող է ապահովել օբյեկտի շահագործման հետ կապված էկոլոգիական անվտանգության անհրաժեշտ մակարդակը:

Ոիսկի գնահատումը կողմնորոշված է վտանգի, ռիսկի աղբյուրների և գործոնների, ինչպես նաև դրանց հնարավոր աղբեցության գոտիների ու ձևերի հայտնաբերմանը: Ոիսկի կառավարումը հիմնված է դրա վերլուծության և գնահատման գործողությունների արդյունավետության վրա: Այդ փուլերի խնդիրների լուծումը հնարավորություն է ստեղծում օբյեկտներում ազդեցությունների կառավարման արդյունավետ քաղաքականության մշակման համար, որը, ըստ Էության, պետք է նպատակառուղղված լինի նվազագույն ջանքերով առավելագույն էֆեկտի հաղթահարմանը: Հետևաբար՝ ռիսկի կառավարում ասելով պետք է հասկանալ հասարակության սահմանափակ նյութական ռեսուրսների պայմաններում տարբեր տեսակի ռիսկերի նվազեցման ծախսերի օպտիմալ բաշխման գործընթաց, որը, տվյալ հասարակության

տնտեսական և սոցիալական պայմաններին համապատասխան, ապահովում է բնակչության և շրջակա միջավայրի անվտանգության համապատասխան մակարդակի հաղթահարումը:

Ռիսկի կառավարման ոլորտում հայտնի է ռիսկի նվազեցման երեք միջոց՝

1. նախագծի մասնակիցների միջև ռիսկի բաշխում,
2. էկոլոգիական ապահովագրում,
3. անմիջական ծախսերի կուտակման համար միջոցների պահեստավորում (էկոլոգիական ֆոնդերին հատկացումների միջոցով):

Այսպիսվ՝ ռիսկի կառավարման փուլում անհրաժեշտ է միավորել ռիսկի գնահատման և անվտանգության փորձաքննության բոլոր տարրերը, ինչպես նաև մշակել իրավական, վարչական, կազմակերպակառավարչական, ձարտարագիտատեխնոլոգիական բնույթի առաջարկություններ և ուղեցույցներ:

Բազմազան են գիտական հետազոտությունները և ռիսկի գնահատման մեթոդական մոտեցումները, ինչը որոշ չափով պայմանավորված է դրա գիտական իմաստավորման (հեղինակային ընկալման) արանձնահատկություններով: Այնուամենայնիվ, հայտնի է ռիսկի՝ որպես վտանգի քանակական չափի երկու հիմնարար մեկնաբանում.

- ռիսկը՝ որպես անբարենպաստ իրադարձության ի հայտ գալու հավանականություն,
- ռիսկը իրադարձությամբ պատճառված առավելագույն վնաս:

Անփոփելով գիտական սահմանումները՝ կարելի է պնդել, որ ռիսկը հնարավոր իրադարձությունների հավանականության և դրանց հետ կապված հետևանքների ֆունկցիա է: Այս տեսանկյունից հետաքրքիր է ռիսկի գիտական մեկնաբանման այն մոտեցումը, համաձայն որի ռիսկը տեխնածին և բնական երևույթների առաջացման հավանական չափն է, որոնք ուղեկցվում են վտանգավոր գործուների ծևավորմամբ և պատճառված սոցիալական, տնտեսական, էկոլոգիական և այլ վնասներով:

Ծևավորված է այն կարծիքը, թե ռիսկի բոլոր տեսակներից առավել ուսումնասիրված է սոցիալականը: Դա հուսադրող գիտական փաստ է՝ հատկապես էկոլոգիական անվտանգության ապահովման շրջանակներում, ինչպես նաև ընդունելի ռիսկի գնահատման մեթոդաբանության կատարելագործման և կիրառման արդյունավետության մակարդակի բարձրացման տեսակետից: Ուշագրավ է, օրինակ՝ հԿուզմինի առաջարկած տեխնածին ռիսկի և անվտանգության ապահովման հիմնախնդիրների ուսումնասիրման համակարգադիմնամիկ մեթոդական մոտեցումը: Ըստ հեղինակի՝ եթե մարդու պաշտպանության խնդիրը պատշաճ է ծևակերպված, ապա շրջակա միջավայրի պաշտպանությունը մարդու անվտանգության ապահովման անհրաժեշտ պայման է:

Անվտանգության կառավարման խնդրի հիմքում, որպես հասարակական առողջության կառավարման նպատակ և չափանիշ են ընտրված գալիք կյանքի միջին տևողությունը, իսկ որպես նպատակային ֆունկցիա՝ մահացության ընդհանուր գործակիցը (կամ ռիսկը): Այս մոտեցմամբ հասարակական առողջության պաշտպանումն ի հայտ է գալիս նոր որակով, այսինքն՝ որպես շրջակա միջավայրի պաշտպանության և էկոլոգիական անվտանգության ապահովման և նախապայման, և դրդապատճառ: Դրանով իրագործվում է «Եր-

կակի բարեկեցության» հայեցակարգային դրույթը՝ էկոլոգիական և սոցիալական:

Անվտանգության կառավարման օպտիմալացման խնդրի լուծման տեսանկյունից որպես չափանիշ պետք է համարվի ոչ թե նվազագույն ռիսկի, այլ ընդունելի ռիսկի հաղթահարման պայմանը, որի մակարդակը թելադրված է բացառապես սոցիալական բնույթի պատճառներով (տեխնածին ռիսկի նվազեցման ժամանելի օպտիմալացման մեթոդաբանություն): Այսպիսով՝ անվտանգության կառավարման համակարգադինամիկ մեթոդի կիրառման գիտական հիմնավորումը նորովի իմաստավորեց կապը կենսուրութի (մարդու բնակության բնական միջավայր) և տեխնոլորտի (մարդու բնակության արհեստական միջավայր) վտանգների միջև՝ արդիականացնելով անվտանգության սոցիալ-տնտեսական համակարգերի ստեղծումը: Դրանք, ըստ էության, կենսուրութի վտանգավոր գործուների ազդեցություններից պաշտպանության համակարգեր են: Տեխնոլորտի զարգացման դեպքում հնարավոր վտանգների առթյուր դարձան տեխնոլոգիական գործուները, որոնց ամբողջական ազդեցությունը համաչափ է էկոլոգիական գործուների ազդեցությանը: Այս պարագայում (սահմաններում) անհրաժեշտ է ստեղծել մարդու պաշտպանությանը ծառայող անվտանգության ապահովման ժամանակակից տեխնիկական համակարգեր: Նման համակարգերի ստեղծումը և ներդրումը կարևոր են ինչպես ազգային, այնպես էլ տարածաշրջանային մակարդակներում:

Ոիսկի մեթոդաբանության կիրառման այս ուղղությունն արտացոլված է «Էնվայրոնմենտալ պարիտետի» հայեցակարգում: Սա սկզբունքորեն նոր և ուշագրավ մոտեցում է, որը կողմնորոշված է տնտեսական գործունեությամբ պայմանավորված անդրսահմանային ռիսկերի կառավարման հիմնախնդիրների լուծմանը: Մեթոդաբանությունը բավական հերանկարային է՝ հատկապես եսպր կոնվենցիայից բխող միջամտական էկոլոգիական խնդիրների խաղաղ կարգավորման և էկոլոգիական անվտանգության ապահովման քաղաքական դիրքերից:

Համաձայն մեթոդաբանության՝ հիմնախնդիրների լուծումը, ռազմավարական տեսանկյունից, պետք է հիմնված լինի երկու սկզբունքի վրա՝

- յուրաքանչյուր երկրում ցանկացած տնտեսական գործունեություն պետք է իրականացվի միանման կամ համարժեք (էկվիվալենտ) պայմաններում, որոնք վերաբերում են բնակչության և բնական միջավայրի անվտանգության մակարդակին (անվտանգության էկվիվալենտ մակարդակի սկզբունք),
- այս կամ այն պետությանը տնտեսական գործունեությամբ պայմանավորված հնարավոր և պատճառաբանված վնասի պատասխանատվությունը (վնասի հատուցումը) պետք է կրի այն պետությունը, որը մեղավոր է դրանում («աղտոտող վճարում է» սկզբունքը)²:

Նշենք, որ հենց այս սկզբունքներն են Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) անդամ պետությունների՝ տվյալ բնագավառի փոխհարաբերությունների կարգավորման հիմքում: Սակայն, ինչպես վկայում է փորձը, վերոնշյալ սկզբունքների գործնական կիրառումը հնարավոր է միայն այն պետությունների միջև, որոնք գտնվում են

² Տե՛ս OECD Guiding Principles for Chemical Accident Prevention, Preparedness and Response. (OECD Environment Monograph №51), Paris, 1992, էջ 10–22:

տնտեսական զարգացման միևնույն մակարդակում և, բնակչության մեկ շնչի հաշվով, օժտված են համարժեք տնտեսական ռեսուրսներով: Հեղինակների պնդմամբ՝ այդ սկզբունքների կիրառումը տնտեսական զարգացման տարբեր մակարդակներում գտնվող պետությունների միջև կարող է դաշնալ բարդ միջավայրական բախումների առարկա:

Ժամանակակից ռիսկի վերլուծությունը բավականին ընդլայնել է ռիսկի գնահատման մեթոդաբանության կիրառման ոլորտները: Այստեղ ուշագրավ են հատկապես գիտական հետազոտությունները՝ կապված ռիսկի ինտեգրատիվ կառավարման հետ: Միաժամանակ, ռիսկի վերլուծության մեթոդաբանությունը կողմնորոշված է սառը պատերազմի ժարանգության հիմնախնդիրների լուծմանը (ռազմարդոյունաբերական համալիրի և շրջակա միջավայրի մասով): Այդ մեթոդաբանությունը հեղինակները պայմանականորեն անվանել են MAPOC3 (մեթոդոլոգիա անալիզա ռիսկա դրա օկրոյացությունը սրբազնության մասունքը՝ հիմք ստեղծելով ռիսկի ինտեգրատիվ կառավարման համար³:

Արժեքավոր են նաև Ա.Սուլբետոյի գիտական ուսումնասիրությունները՝ նվիրված է կյանքի որակի համակարգում էկոլոգիական ռիսկի կառավարմանը: Հեղինակը մշակել է էկոլոգիական ռիսկի գնահատման և կառավարման սկզբունքները⁴:

Այսպիսով՝ սկզբունքների պահպանումը և կյանքի որակի համակարգում էկոլոգիական ռիսկի կառավարումը, ըստ էության, նախադիրյալներ են ստեղծում շրջակա միջավայրի որակի և հասարակական առողջության որակի համակարգերում էկոլոգիական ռիսկի կառավարման համար: Այստեղից էլ բխում է ռիսկի կառավարման միասնական համակարգի ձևավորման անհրաժեշտությունը՝ նպատակ ունենալով դա ծառայեցնելու էկոլոգիական անվտանգության ապահովման հիմնախնդիրների լուծմանը:


Հեղանկարային է համարվում էկոլոգատնտեսական համակարգերում բնատեխնածին ռիսկի մակարդակի կառավարման և անվտանգության ապահովման կազմակերպական ու տնտեսական մեխանիզմների կիրառումը: Նշենք, որ գիտական գրականության մեջ ներկայացված սահմանումներից մեկում էկոլոգատնտեսական համակարգերը դիտվում են որպես մարդուն շրջապատող աշխարհում տնտեսական, տեխնիկական, սոցիալական և բնական փոխկապակցված գործուների ամբողջություն: Սակայն առ այսու «էկոլոգատնտեսական համակարգ» հասկացությունը վերջնականացես չի սահմանվել: Մեխանիզմների համակարգի կառուցվածքը ներկայացված է գծապատկերում⁵:

Համակարգի դիտարկումից երևում է, որ առավել կարևոր դերը պատկանում է ռիսկի/անվտանգության մակարդակի համալիր գնահատման մեխանիզմին: Դա պայմանավորված է նրանով, որ կառավարման բոլոր մեխանիզմների բաղադրատարրերը պետք է լարված լինեն՝ կախված ռիսկի (անվտանգության մակարդակի) դիտարկվող կամ չափվող մակարդակից:

³ Տե՛ս Еременко V., Bleу D., Droppo J., May 2–11, 2000. Bourgass, Bulgaria, “Зелени Бургас” hosted by the Bourgass UNESCO/ICES Risk Training Centre, էջ 1–10:

⁴ Տե՛ս Субетто А.И., Управление экологическим риском в системе качества жизни. “Стандарты и качество”, №8, 1995, էջ 44–45, № 7, 1995, էջ 28–33:

⁵ Տե՛ս Бурков В.Н., Новиков Д.А., Щепкин А.В., Механизмы управления эколого-экономическими системами. М., “Физматлит”, 2008:



Գծապատկեր 1. Էկոլոգատնտեսական համակարգում ռիսկի/անվտանգության կառավարման կազմակերպական և տնտեսական մեխանիզմների համակարգի կառուցվածքը

Տնտեսական պատասխանատվության մեխանիզմն ընդգրկում է չափորոշիչների համակարգ, որոնցից շեղումը որոշակի տնտեսական պատժամիջոցների (տուգանքներից մինչև արտադրության ընդհատում, շինարարության արգելում և այլն) պատճառ կարող է դառնալ: Չափորոշիչները նախևառաջ վերաբերում են օգտագործվող տեխնոլոգիաների, արտադրության (կամ շինարարության) անվտանգության ապահովման կազմակերպատեխնիկական միջոցներին և արտանետումների կամ արտահոսքների սահմանային թույլատրելի խոռությունների նկատմամբ սահմանափակումներին:

Մեխանիզմների այս խմբին է պատկանում գործունեության տնտեսական և այլ տեսակների էկոփորձաքննությունը, ինչպես նաև վնասների հատուցման, տուգանքների, պատասխանատվության ռիսկի համար վճարման և առողջության մեխանիզմները: Ինչ վերաբերում է ռիսկի մակարդակի նվազեցման խրախոսաման մեխանիզմներին, ապա դրանցից կարելի է նշել արտոնյալ հարկադրման և անվտանգության մակարդակի բարձրացման (ռիսկի նվազեցման) միջոցառումների արտոնյալ վարկավորման մեխանիզմները: Կիրառման նոյն նշանակությունն ունեն ռիսկի մակարդակի նվազեցման ֆինանսավորման, նվազեցման ծախսերի հատուցման, տնտեսական մոտիվացման և, մասամբ, կառավարման մարմինների հետաքրքրությունների համաձայնեցման մեխանիզմները:

Ոիսկի վերաբշխման մեխանիզմները հիմնականում ապահովագրական են (պետական, անկախ և փոխադարձ ապահովագրում): Դրանցից են նաև տնտեսական մոտիվացման և տարածաշրջանային ծրագրերի օպտիմալացման մեխանիզմները:

Մեկ այլ խումբ են կազմում ռեզերվացման մեխանիզմները, որոնք գործում են արտակարգ իրավիճակներում: Այդ շարքից են աշխատանքային

ռեսուլրսների, ռեգերվների գոյացման (փրկարարներ, հրշեջներ և այլն), նյութական ռեսուլրսների, արտադրանքի թողարկման արագ կազմակերպման, հզորությունների ապահովման մեխանիզմները, որոնք անհրաժեշտ են արտակարգ իրավիճակներից առաջացած կորուստների նվազեցման կամ վերացման համար: Ի տարբերություն վերոնշյալ մեխանիզմների, ռեգերվացման մեխանիզմները կողմնորոշված են արտակարգ իրավիճակների շուտափույթ վերացման նպատակով պայմանների ստեղծմանը և, դրանց հետ կապված, կորուստների նվազեցմանը:

Կենտրոնացված ֆոնդերի օգտագործման մեխանիզմների համար հաճախ առաջին ալան է մղվում ոչ թե ֆոնդերի ձևավորման հիմնախնդիրը, այլ դրանց միջոցների արդյունավետ բաշխումը: Այդ մեխանիզմներից են, նաև նաև վորապես՝ ռիսկի մակարդակի նվազեցման ֆինանսավորման և տնտեսական շահադրդման մեխանիզմները: Վերջապես՝ տարածաշրջանային ծրագրերի կառավարման մեխանիզմների մշակումը ենթադրում է բոլոր կառուցակարգերի օգտագործում և, առաջին հերթին, ռիսկի մակարդակի նվազեցման տարածաշրջանային ծրագրերի օպտիմալացման, ինչպես նաև կառավարման մարմնների հետաքրքրությունների համաձայնեցման մեխանիզմների առկայություն:

Օգտագործված գրականություն

1. Հայաստանի Հանրապետության կենսաբանական անվտանգության ազգային շրջանակ, UNEP, GEF, Եր., 2007:
2. ԵԱՀԿ տեղեկագիրը, OSCE, 2007:
3. Кузьмин И.И., Безопасность и технологенный риск. Системно-динамический подход, ж. ВХО им. Д. Менделеева, т. 35, 1990.
4. OECD Guiding Principles for Chemical Accident Prevention, Preparedness and Response. (OECD Environment Monograph №51), Paris, 1992.
5. Eremenko V., Bley D., Droppo J., May 2–11, 2000. Bourgass, Bulgaria, “Зелени Бургас” hosted by the Bourgass UNESCO/ICES Risk Training Centre.
6. Субетто А.И., Управление экологическим риском в системе качества жизни. “Стандарты и качество”, №8, 1995, № 7, 1995. Антипов М.А., Отчуждение природы в информационном обществе. “Экологическое образование и экологическая культура населения”. Материалы международной научно-практической конференции. Прага, 2013.
7. Агадалова А.П., Оценка экологического риска химических предприятий(на примере производств соляной кислоты и ацетилена)//Автореф. канд. дисс., Еր., 2005.
8. Черняховский Э., Управление экологической безопасностью. М., 2007.
9. Stenner R., Relative hazard and risk metril metodology // Risk Excellence Notes. V.3, №6, 2001.

АЛИСА ГЕВОРГЯН

Доцент кафедры экономики природопользования АГЭУ,
кандидат экономических наук

Анализ риска в системе обеспечения экологической безопасности. – С точки зрения задачи оптимизации управления экологической безопасности в статье обоснована важность анализа риска в единой системе оценки воздействия на окружающую среду и экологической экспертизы. Процесс оценки ориентирован на выявление источников и факторов ущерба и риска, как потенциальных форм и зон их воздействия. Сделана попытка оценить процесс оптимального распределения затрат на предотвращение разных видов риска в условиях ограниченных материальных ресурсов общества, который обеспечивает преодоление адекватного уровня безопасности населения и окружающей среды в соответствии с экономическими и социальными условиями общества.

Ключевые слова: методология анализа риска, экологическая экспертиза, принципы управления экологическим риском, социальный ущерб, экономический ущерб, экологический ущерб.
JEL: Q5, Q57, Q58

ALISA GEVORGYAN

Associate Professor at the Chair of Environmental Economics at ASUE, PhD in Economics

Risk Analysis in the Environmental Safety System. – From the viewpoint of the solution of the problem in terms of environmental safety management optimization, the importance of risk analysis in environmental impact assessment and a unified system of environmental expertise is substantiated in the given paper. The evaluation process is focused on risk factors and sources of risk, as well as identification of areas and forms of potential impact. An attempt was made to assess the optimal allocation of costs of reduction of various risks taking into consideration limited resources of society, which ensure adequate level of public and environmental safety in accordance with economic and social conditions.

Key words: risk analysis methodology, environmental expertise, environmental risk management principles, social damage, economic damage, environmental damage.

JEL: Q5, Q57, Q58